

ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ

Սույն թվականի սեպտեմբերի 10-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10.30-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի 1988—1989 ուսումնական տարեշրջանի բացման հանդիսությունը:

Նախագահության սեղանի շուրջ, Վեհափառ Հայրապետի կողքին, տեղ էին գրավել Տ. Սիոն արքեպս. Մանուկյանը, Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը, Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը:

Նախագահության սեղանի շուրջ տեղ էր գրավել նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ տիար Ռ. Զարգարյանը:

Հոգևոր ճեմարանի նոր ուսումնական տարեշրջանի բացման հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը, Մայրավանքի պաշտոնեությունը և մեծ թվով արցախահայ ուխտավորներ:

Հանդիսությունն սկսվեց ներկաների կողմից հոտնկայս արտասանված Տերունական աղոթքով: Այնուհետև հոգևոր ճեմարանի երգչախմբի կատարմամբ հնչեցին Հայաստանի պետական հիմնը և հոգևոր ճեմարանի քայլերգը: Քայլերգից հետո երգվեցին մի քանի շարականներ, ապա Տ. Միքայել աբղ. Աջապահյանը ընթերցեց «Սերմնացանի առակը» (Մատթ. ԺԳ 4—9): Ավետարանական ընթերցումից հետո հնչեց «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը:

Ուսումնական նոր տերաշրջանի բացմանը նվիրված սույն հանդիսության առթիվ հակիրճ խոսքով հանդես եկավ հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը.

«Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը գտնըվում է նոր ուսումնական տարվա սեմին: Ուրախ ենք բոլորս: Ամառային արձակուրդից հետո մեր սրտերն ու հոգիները կըրկին ձգտում են դեպի աշխատանք, դեպի ուսումնառություն՝ մեր Եկեղեցուն ծառայելու փափագով և վճռականությամբ:

Կյանքը առաջ է ընթանում: Առաջ ենք ընթանում նաև մենք: Մեր բոլորիս պարտքը է ամեն կերպ ձգտել, որ ամեն տարի ճեմարանը բարձրանա մեկ աստիճանով: Այս գիտակցությամբ է, որ գործում է և գործելու է հոգևոր ճեմարանի տեսչությունը: Այս գիտակցությամբ է, որ վերստին իր դռներն է բացում հոգևոր ճեմարանը:

Այսօր Հայ Եկեղեցին թևակոխում է մի նոր փուլ Սովետական Միության մեջ: Նկատելի է մեր Հայրենիքի պետական մարմինների բարյացակամ վերաբերմունքը

Եկեղեցու նկատմամբ: Ամենուր վերաբացվել և վերաբացվում են եկեղեցիներ և վանքեր, ինչպես օրինակ՝ Տաթևն ու Մակարավանքը, Մեղրիի, Մարտունու, Լենինգրադի եկեղեցիները և այլն: Մենք այսօր գտնվում ենք մի նոր պահանջի առջև՝ պատրաստել բավարար թվով գիտակից և նվիրված հոգևորականներ, որոնք միաժամանակ լավ զինված լինեն թե՛ ծիսական-երաժշտական գիտելիքներով և թե՛ ունենան իմացական-գաղափարական լիարժեք պատրաստություն:

Հափազանց կարևոր են մանավանդ հոգևորականի ծիսական կարողությունները: Ծառայության կոչվելով գավառներում, նա հաճախ ստիպված է լինելու ծիսական արարողություններ, ժամերգություններ կատարել և ս. պատարագ մատուցել միայնակ: Եվ գալտնիք չէ բոլորիս համար, հոգեկան ինչպիսի հուզում է հաղորդում հավատացյալին լավ կատարվող արարողությունը:

Մյուս կողմից, վերջին տարիներին եթե ծիսական գիտելիքներ և երաժշտական ընդունակություններ ունենալը բավարար էր համարվում ծիսակատար քահանա լինելու համար, ապա այսօր, նոր պայմանների բերումով, անչափ անհրաժեշտ են նաև քահանայի ընդհանուր զարգացումն ու իմացական կարողությունները: Հմոռանանք, որ մեր գյուղական շրջաններից շատերի բնակչությունը վերջին 50 տարիների ընթացքում հոգևոր հովիվ չի ունեցել: Նոր հովիվը չպետք է հուսախաբ անի մեր հավատացյալ ժողովրդին»:

Իր խոսքի ավարտին տեսուչ քահանա հայրը հրավիրեց Վեհափառ Հայրապետին՝ իր օրհնությունն ու պատգամները տալու ճեմարանի դասախոսական կազմին և ուսանողությանը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

Ձեզ բոլորիդ բարի լույս:

Այս արևի լույսի ներքո և մեր հայրենի պայծառ երկնքի տակ այսօր հավաքվել ենք, որպեսզի բացումը կատարվի 1988—89 կրթական տարեշրջանի Մայր Աթոռի հոգևոր ճեմարանում: Բոլորս ուրախ ենք, հատկապես ես, որ, հակառակ իմ բավական հառաջացած տարիքին, ուրախությունն ունեմ ներկա գտնվելու վերստին նման մի հանդիսության: Այս ուրախությամբ ես բարի լույս եմ ասում բոլորիդ: Լուսավոր գործ է նաև այն, ինչ որ կատարվում է մեր հոգևոր ճեմարանի հարկի տակ: Դասատիարակում ենք երիտասարդներ, նոր սերունդներ՝ ապագա հոգևոր ծառայության համար: Մեր Եկեղեցին աշխարհի հնագույն Եկեղեցիներից մեկն է, պաշտոնապես հիմնված մոտավորապես 1700 տարիներ առաջ: Հին Եկեղեցի է, բայց մշտապես վերանորոգվել է, երիտասարդացել է, ջահելացել է նոր սերունդներով, հոգևոր նոր ծառայողներով: Երիտասարդությունը կյանքի վերանորոգումն է, վերազարթոնքն է, եթե կուզեք՝ վերապայծառացումը: Մենք, բարեբախտաբար, Աստուծո օգնությամբ և մեր պետական իշխանությունների միշտ բարյացակամ վերաբերմունքով, այստեղ այդ աշխատանքը կատարում ենք բավական դրական արդյունքներով և աստիճան առ աստիճան զարգացումով: Ինչպես տեսուչ քահանա հայրն էլ ընդգծեց, մենք պարտավոր ենք ուշադիր լինելու՝ չբավարարվելու համար եղած մակարդակով և աշխատելու ենք ամեն տարի մի աստիճանով գոնե այն բարձրացնել հոգևոր-կրոնական իմաստով, ազգային-հայրենասիրական իմաստով:

Այսօր կանգնել ենք բախտորոշ մի ժամանակաշրջանի սկզբին: Եկեղեցական կյանքը մեր երկրում և ողջ Սովետական Միությունում զարգացման նոր փուլի մեջ է մտնում: Ինչպես նշվեց քիչ առաջ, նոր վանքեր, եկեղեցիներ բացվեցին ու պիտի բացվեն և՛ Հայաստանում, և՛ դրացի հանրապետություններում, և՛ Լեռնային Ղարաբաղում, որտեղ մենք հույս ունենք, որ շուտով կկարողանանք նաև մեր Գանձասարի վանքը բաց անել:

Հենց քիչ առաջ, այստեղ իմ գալուց առաջ, Լենինգրադից ինձ զանգ տվեց Տիրան վարդապետը: Տիրան վարդապետը, ինչպես գիտեք, Ռուսաստանի թեմի մեր առաջնորդական տեղապահն է: Նա Մոսկվայից գնացել էր Լենինգրադ, ընկերակցությամբ Եզրաս աբեղայի, Լենինգրադի հայոց եկեղեցու բացման առիթով: Այնտեղ եկեղեցական նոր համայնքը արդեն կազմված է և եկեղեցին հանձնված համայնքին: Վերանորոգության աշխատանքները շուտով պիտի սկսվեն:

Ահավասիկ, կենդանի, անմիջական մի տեղեկություն, մի բարի լուր, որ ուզեցի ձեզ հայտնել: Այս մեկ օրինակը արդեն ցույց է տալիս մեր ընդհանուր գործի հաջող ընթացքը և՛ մայր հայրենիքում, և՛ Սովետական Միության այլ շրջաններում, որտեղ հայկական եկեղեցիները գործում են կամ պիտի գործեն հետզհետե նոր եկեղեցիների բացումով: Ահա այսպիսի պայմանների մեջ, կարծում եմ, մենք բոլորս, հատկապես հոգևոր ճեմարանի հարկի տակ, ավելի պատասխանատվություն պետք է զգանք, նոր սերունդների, երի-

տասարդ հոգևորականների պատրաստման գործում:

Ես այս առիթով ողջունում եմ հոգևոր ճեմարանի տեսչությանը և դասախոսական կազմին, մաղթում եմ նրանց բոլորին՝ ուժ, եռանդ, հոգևոր ներշնչանք, որպեսզի իրենց առաքելությունը հետզհետե առավել արդյունավետությամբ իրագործեն:

Ողջունում եմ նաև մեր ուսանողներին, որոնց մեկ կարևոր մասը նոր ընդունված է այստեղ: Մաղթում եմ ձեզ, սիրելի ուսանողներ, աստվածային շնորհ և հոգևոր ապրումներ, կարգապահական ոգի, որպեսզի հոգևոր ճեմարանի հարկի տակ շարունակեք ձեր ուսումնառությունը այնպես, որ դժգոհություն չստեղծվի ձեր նկատմամբ ո՛չ ճեմարանում, ո՛չ Մայր տաճարում, որտեղ դուք կանոնավոր կերպով պետք է մասնակցեք եկեղեցական արարողություններին: Նաև ձեզանից սպասում ենք հետևողական կարգապահություն ձեր ամենօրյա կյանքի ընթացքում, լինի դա հոգևոր ճեմարանի հարկի տակ, Մայր Աթոռի շրջափակում, ննջարաններում թե ճաշարանում: Մենք պահանջում ենք ձեզանից, որ դուք լինեք կարգապահ տղաներ, ամեն տեղ, ամեն ինչով, հարգելով այն կարգն ու կանոնը, որ հաստատված է Մայր Աթոռում: Մենք, սիրելի երիտասարդներ, անշուշտ ավելի պահանջկոտ ենք, ավելի խիստ՝ եթե կուզեք, քան թե հանրային ուրիշ դպրոցներում, որովհետև այստեղ դուք հատուկ նպատակով եք եկել: Այն կարգապահական կանոնները, որ ուզում ենք, որ դուք հարգեք, չպետք է միայն արտաքին ձևականություններ նկատեք: Այդ արտաքին ձևականությունների միջոցով մենք ուզում ենք ձեր նկարագիրները կարգ-կանոնի մեջ դնել, որպեսզի ձեր ապագա կյանքի ընթացքում կարգապահ հոգևորականներ լինեք: Բարոյական նկարագրի կազմության համար խիստ կարևոր է կարգապահության հարգումը ամենօրյա կյանքում:

Այս մաղթանքով մենք բաց ենք անում դռները հոգևոր ճեմարանի, աղոթելով, որ Աստված միշտ առատ լույսով ողողի մեր այս կրթական հաստատությունը և Իր օրհնությունը բաշխի բոլորիդ այժմ և միշտ. ամեն:

Հոգևոր ճեմարանի 1988—1989 ուսումնական տարեշրջանի բացման հանդիսությունն ավարտվեց միաձայն արտասանված Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով: